

**ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՑԻ
ՏՊԱՐԱՆՈՒՄ 1837-1840 ԹԹ. ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ
ԳՐՔԵՐԻ ՇՈՒՐՁ¹**

ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Պարմության ինստիտուտի հայցորդ

Ամփոփագիր

Հոդվածում քննության են ենթարկվել 1837-1840 թթ. Շուշիում տպագրված գրքերը, որոնք Ղարաբաղի նորաստեղծ թեմի տպարանի առաջին հրատարակություններն էին: Վերջիններիս լույս ընծայման համար ներդրվել են Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի հսկայական ջանքերը և անձնական միջոցները: Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել տեղեկություններ տվյալ ժամանակահատվածում Շուշիում տպագրված նորահայտ գրքերի մասին, վերլուծվել են դրանց բովանդակությունն ու գործածության ոլորտները, անդրադարձ է կատարվել գեղարվեստական ձևավորմանը՝ Շուշիում մինչ այդ տպագրված գրքերի համեմատական քննությամբ: Տարբեր աղբյուրների համադրմամբ ի մի են բերվել այն բոլոր արժանահավատ տեղեկությունները, որոնց շնորհիվ վերականգնվել են գրքերի վերաբերյալ անհայտ տվյալները: Հոդվածի վերջում զետեղված է 1837-1840 թթ. Շուշիում տպագրված գրքերի՝ մեր կազմած ցանկը՝ մատենագիտական համառոտ նկարագրություններով և ծանոթագրություններով:

Բանալի բառեր. *Շուշի, Բաղդասար մետրոպոլիտ, Ղարաբաղի թեմ, տպարան, հրատարակություն, գիրք, մատենագիտություն:*

Շուշիում տպագրությունն սկիզբ է առել 1828 թ., որի համար նախադրյալ հանդիսացավ Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեությունը տարածաշրջանում: 1828-1835 թթ. բողոքական քարոզիչները Շուշիում ծավալեցին տպա-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19YR-6A059 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

գրական լայն գործունեություն¹: Շուշիում նրանց գործունեության ամբողջական դադարից հետո (1837 թ.) ռուսական կառավարությունը տեղի պաշտոնյաների կարիքների համար գնեց նրանց ունեցած անշարժ գույքը², իսկ տպարանը 1837 թ. գնեց Ղարաբաղի նորաստեղծ թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցը³:

Առաջին ընդգրկուն տեղեկությունը Բաղդասար մետրոպոլիտի տպարանի և այդտեղ տպագրված գրքերի մասին հաղորդում է Լեոն: Բացի դրանից, նա հիշատակում է Ղարաբաղի *կոնսիստորիայի* կազմած գրքերի մի ցուցակ, որից ինքը տեղեկացել է, թե այս տպարանի երախայրիքը 1837 թ. տպագրված Ջորջ Բայրոնի «Շիլլոնեան կալանատու»⁴ գրքույկն է⁵:

Այդ տարիներին Շուշիում տպագրված որոշ գրքերի մասին են հիշատակում անցյալի հայտնի մատենագետներից Գարեգին Զարբհանալյանը⁶, Արսեն Ղազիկյանը⁷, Գարեգին Լևոնյանը⁸, ուշ շրջանի ուսումնասիրողներից Սմբատ Ավագյանը⁹ և այլք: Այնուամենայնիվ, այդպես էլ հասկանալի չէ, թե քանի գիրք է տպագրել Բաղդասար մետրոպոլիտը և որ տարիներին: Նույնիսկ «*Հայ գիրքը 1801-1850 թվականներին*» մա-

¹ Շուշիում քարոզիչների տպարանի և տպագրական գործունեության մասին մանրամասն տե՛ս **Պետոյան Ս.**, «Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827-1835 թթ.)», *Հայագիտության հարցեր*, 2021/1, էջ 45-65:

² Акты собранные Кавказскою Археографическою Коммиссиею, подъ редакцию А. Д. Берже, Томъ VIII, Тифлис, 1881, с. 332. Magazin für die neueste Geschichte der evangelischen Missions und Bibelgesellschaften, Vol. 23, Basel, 1838, S. 382.

³ **Լէօ**, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913, Թիֆլիզ, 1914, էջ 121-122:

⁴ Տե՛ս սույն հոդվածի հավելվածի թիվ 1 նկարագրությունը (այսուհետ՝ հավելված):

⁵ **Լէօ**, Պատմութիւն Ղարաբաղի..., էջ 124:

⁶ **Զարբհանալեան Գ.**, Հայկական մատենագիտութիւն (Այրութեանական ցուցակ տպագրութեան գիւրէն մինչեւ առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց), Վենետիկ, 1883, էջեր 315-316, 321, 333-334:

⁷ **Ղազիկեան Ա.**, Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կենսաբ., Հտ. Ա. (Ա-Մ), Վենետիկ, 1909-1912, էջ 1512:

⁸ **Լևոնյան Գ.**, Հայ գիրքը և տպագրության արվեստը. պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը, Երևան, 1958, էջ 229:

⁹ **Ավագյան Ս.**, Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Երևան, 1989, էջ 30-34:

տենագիտական հատորն ուսումնասիրելիս¹ տեսնում ենք, որ Բաղդասար մետրոպոլիտի տպարանում հրատարակված գրքերի նկարագրությունը հասնում է 11-ի: Հասկանալի է, որ հայ գրքի մատենագիտական ցանկերը պարբերաբար համալրվում և թարմացվում են, ուստի դրանք որևէ ժամանակաշրջանում չեն կարող լինել ամբողջական: Հետևաբար, ճիշտ չէ հիմք ընդունել միայն հայ գրքի մատենագիտական ցանկերում հիշատակված նկարագրությունների թվաքանակը:

Վրեժ Հարությունյանը նշում է 1837-1840 թթ. Շուշիում հրատարակված թվով 11 գրքերի մասին՝ որևէ աղբյուրի հղում չկատարելով² (հավանաբար նա առաջնորդվել է հայ գրքի մատենագիտական տվյալներով), մինչդեռ Ռուբեն Տեր-Գասպարյանը հիշատակում է 13 անուն գիրք՝ թվարկելով դրանցից յուրաքանչյուրը³: Վերջինիս հիշատակությունը հիմնված է Լեոյի՝ վերոհիշյալ ուսումնասիրության վրա, սակայն պետք է նշել, որ Ռ. Տեր-Գասպարյանի հաղորդած տեղեկությունը չի ներկայացնում ամբողջական պատկերը Լեոյի հայտնած տվյալները տարբեր կերպ հասկանալու պատճառով⁴:

Ինչպես տեսնում ենք, այդպես էլ հասկանալի չէ, թե այս տարիներին քանի՞ անուն գիրք է տպագրվել Բաղդասար մետրոպոլիտի տպարանում: Այս հարցի պատասխանը գտնելու համար անհրաժեշտ է համադրել եղած փաստերը, ուսումնասիրել մեզ հասած վերոհիշյալ գրքերը, ինչպես նաև վավերագրական աղբյուրները:

Այստեղ կարևոր է հասկանալ, թե 1913 թ. Լեոն, իր աշխատության մեջ խոսելով Բաղդասար մետրոպոլիտի տպարանի մասին, Ղարաբաղի

¹ Դավթյան Հ., *Հայ գիրքը 1801-1850 թվականներին (մատենագիտություն)*, Երևան, 1967, էջ 533:

² Տե՛ս Հարությունյան Վ., *Քարեգործական ընկերությունների և բարերարների գործունեությունը Շուշիում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին (թեկնածուական ատենախոսություն)*, Ստեփանակերտ, 2017, էջ 98:

³ Տեր-Գասպարյան Ռ., *Շուշի քաղաքը*, Երևան, 1993, էջ 89-90:

⁴ Ռ. Տեր-Գասպարյանի հիշատակած 13 անուն գրքերից իրականում որպես առանձին տպագրություն եղել է 11-ը, իսկ մնացյալ երկու գրքերից մեկը՝ Հովսեփ վարդապետ Արցախեցու «Վահան ուղղափառաց» աշխատությունը (այս մասին հանգամանալից խոսելու ենք մեր մեկ այլ հոդվածում), այդպես էլ որևէ տեղ չի տպագրվել, մյուսն էլ Գրիգոր Տեր Ավագյանի թարգմանած «Աստված» ստեղծագործությունն է (հեղ. Գ. Դերժավին), որը թեև չի ունեցել առանձին հրատարակություն, սակայն տպագրվել է մեկ այլ աշխատության մեջ (տե՛ս հավելվածի թիվ 9 նկարագրության տարընթերցումը):

Կոնսիստորիայի կազմած գրքերի ի՞նչ ցուցակ էր հիշատակում: Դա, ամենայն հավանականությամբ, Սինոդի հանձնարարությամբ 1844 թ. Ղարաբաղի *Կոնսիստորիայի* կազմած «Ցուցակ մատենիցն ու գրքուկաց տպագրելոց՝ ի վիճակային տպարանին Ղարապաղու» վերտառությամբ հայերեն-ռուսերեն ցուցակն է, որի մեջ ներառված են 1837-1840 թթ. Բաղդասար մետրոպոլիտի տպարանում հրատարակված 12 անուն գրքերը¹: Ցուցակը հնարավորություն է տալիս ծանոթանալու այդ տարիներին տպագրված գրքերի համառոտ անվանումներին, տպագրության թվականներին և թե դրանք ում որոշմամբ («վճռահատութեամբ») ու հրամանով են տպագրվել՝ Էջմիածնի Սինոդի², թե՞ Ղարաբաղի վիճակավոր առաջնորդի:

Վերջապես, այս ցուցակը պետք է արտահայտեր այդ տարիներին Շուշիում տպագրված գրքերի ամբողջական պատկերը, սակայն տվյալ տպարանի՝ մեզ հասած գրքերի և ցուցակի համեմատությունը ցույց տվեց, որ 1839 թ. այստեղ հրատարակվել է երկու անուն գիրք համառոտ քերականության մասին², որոնցից միայն մեկն է նշված վերոհիշյալ ցանկում: Մեզ այդպես էլ չհաջողվեց պարզել, թե այդ երկու դասագրքերից որ մեկն է բաց թողնվել այդ ցանկից:

Բաղդասար մետրոպոլիտի եռանդուն ջանքերի շնորհիվ Շուշիում 1837-1840 թթ. տպագրվեցին մի շարք հայերեն արժեքավոր աշխատություններ: Իսկ 1840 թվականից հետո Ղարաբաղի թեմում որևէ գրքի հրատարակության մասին տեղեկություն մեզ հայտնի չէ. ամենայն հավանականությամբ մինչև Բաղդասար մետրոպոլիտի մահը (1854 թ.) տպարանը նոր գրքեր չի տպագրել:

Ինչպես տեսնում ենք, 1837-1840 թթ. Շուշիում հրատարակվել են առնվազն 13 անուն հայերեն գրքեր, որոնց միջինը տարեկան ստացվում է 4-5 գիրք, ինչը փոքր թիվ չէ, եթե համեմատենք նախկինում (1827-1835 թթ.) բողոքական քարոզիչների տպարանի հրատարակությունների հետ: Այդ տարիներին քարոզիչները լույս էին ընծայել միայն 29 անուն հայերեն գիրք կամ գրքույկ, որից 12-ը՝ 1833 թվին, սակայն պետք է նկատի ունենալ, որ բողոքական քարոզիչների հրատարակու-

¹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 56, ց. 1, գ. 1686, թ. 15 և շրջ. (այսուհետ՝ ՀԱԱ):

² Տե՛ս հավելվածի թիվ 6 և թիվ 7 նկարագրությունները:

թյունների մեծ մասը փոքրածավալ էր¹: Նման տպագրությունների համար չէին կարող լինել այնպիսի դժվարություններ (նաև ֆինանսական), ինչպիսիք ունեցել են շատ տպարաններ, որոնց թվում էր նաև Բաղդասար մետրոպոլիտի տպարանը: Մյուս կողմից՝ Բաղդասար մետրոպոլիտի տպագրած գրքերը, բացառությամբ առաջինի, գրեթե ամբողջությամբ մեծածավալ հրատարակություններ էին: Տասնամյակներ անց էլ Շուշիում մեկ տարվա ընթացքում հրատարակված գրքերի թիվը շատ հեռու չէր Բաղդասար մետրոպոլիտի տպարանի՝ մեկ տարվա ընթացքում հրատարակված գրքերի թվից: Բերենք վիճակագրական մի տվյալ, որի համաձայն՝ 1891 թ. Շուշիում տպագրվել է 11 անուն գիրք, որից 8-ը՝ Մահտեսի-Հակոբյանցների, իսկ 3-ը՝ Շուշիի Հայոց հոգևոր տեսչության տպարաններում: Ըստ այդմ՝ Թիֆլիսից և Մոսկվայից հետո տպագրված հայերեն գրքերի քանակով Շուշին երրորդ տեղում էր²:

Վերադառնալով Բաղդասար մետրոպոլիտի տպարանում հրատարակված գրքերին՝ նշենք, որ մետրոպոլիտն ինքն էլ պետք է տպարանը ծառայեցնեի օրվա կարիքներին՝ տվյալ դեպքում թեմի համար հրատարակելով ծիսական գրքեր և դասագրքեր: Ճիշտ է, որ տպարանի առաջին հրատարակությունը 1837 թ. լույս տեսած «Շիրիոնեան կալանատր» գրքույկն է: Այն պետք է համարել փորձնական հրատարակություն, այլապես անհավանական կլինեի կարծել, թե մետրոպոլիտն իր տպարանի ողջ հնարավորությունները, առկա դժվարություններով հանդերձ, կծառայեցնեի գեղարվեստական մի գրքի հրատարակման վրա: Միանգամայն հասկանալի է, որ տպարանը չէր հրատարակի այնպիսի գրքեր, որոնց պահանջը չէր զգում կամ որոնցով հնարավոր չէր շահույթ ստանալ: Չէ՞ որ որևէ գրքի տպագրությունը կա՛մ հետապնդում էր շահույթ ստանալու նպատակ, կա՛մ ուներ խիստ առաջնահերթ նշանակություն: Այդպիսիք էին, նախևառաջ, դասագրքերն ու ծիսական գրքերը: Բնականաբար, Բաղդասար մետրոպոլիտն այդպիսի հրատարակություններ պետք է գներ այլուր գործող հայկական տպարաններից ու գրավաճառներից կամ դրանք հրատարակել տեղում:

¹ Պետոյան Ա., «Նոր էջեր 1828-1835 թթ. Շուշիում տպագրված գրքերի պատմությունից», *Սյունիք հայագիտական հանդես*, 2020, թիվ 1, էջ 69-86:

² Տե՛ս Զաքարեան Պ., «Հայերեն գրքերի հրատարակութեան գործը ռուսահայերի մէջ 1891 թ. (Պաշտօնական տեղեկութիւնների վրա հիմնուած)», *Մուրճ* (Թիֆլիս), 1892, յուլիս-օգոստոս, N 7-8, էջ 1176:

Այսու, այդ տարիներին տպագրված գրքերը կարելի է պայմանականորեն դասակարգել երկու ուղղվածության՝ ծիսական գրքեր և դասագրքեր: Որոշ ծիսական գրքեր, բացի եկեղեցական կիրառությունից, անցյալում ունեին նաև դասագրքային նշանակություն, ինչպես այս տպարանի հրատարակած սաղմոսարանը¹ և ժամագիրքը², որոնք Բաղդասար մետրոպոլիտի ջանքերով 1838 թ. Շուշիում բացված Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցում³ գործածվում էին որպես դասագիրք⁴: Իսկ սաղմոսարաններն առհասարակ համարվում էին գրաբարի ուսուցման ձեռնարկներ, ինչի պատճառով էլ հայ տպագրության մեջ դրանք ունեցել են բազմաթիվ հրատարակություններ:

Հարկ է նշել, որ 1837-1840 թթ. Շուշիի հրատարակությունների շարքում կեսից ավելին դասագրքերն էին, ինչը պայմանավորված էր վերը հիշատակված նորաբաց հոգևոր դպրոցի առկայությամբ: Իսկ 1839-1840 թթ. տպագրված գրքերը⁵, բացառությամբ «Մաշտոցի»⁶, զուտ դասագրքային հրատարակություններ էին, որոնք մինչ այդ եղած տպագիր դասագրքերի՝ նույնական վերահրատարակություններ չէին: Հայկական միջավայրում արդեն իսկ գոյություն ունեցող դասագրքերը տեղի ուսուցիչները Բաղդասար մետրոպոլիտի հանձնարարությամբ վերախմբագրում և համառոտում էին՝ որոշ լրացումներ կատարելով: Այդպիսով դրանք բավական տարբերվում էին իրենց սկզբնօրինակներից: Սա արվում էր դասավանդվող նյութը սաներին առավել մատչելի և կիրառական դարձնելու նպատակով:

Այդպիսի հրատարակություններից էին Միքայել ծայրագույն վարդապետ (հետագայում՝ արքեպիսկոպոս) Սալլանթյանցի⁷ հեղինակած դասագրքերը, որոնցից երկուսը նշյալ սկզբունքով նորոպի տպագրվեցին Շուշիում: Այսպես, Ղարաբաղի հոգևոր դպրոցի հայոց լեզվի ուսու-

¹ Տե՛ս հավելվածի թիվ 3 նկարագրությունը:

² Տե՛ս հավելվածի թիվ 2 նկարագրությունը:

³ *Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75-ամեակը*, Շուշի, 1913, էջ 13:

⁴ ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 116, վավ. 363, թթ. 3ա, 4ա, 6բ:

⁵ Մանրամասն տե՛ս հավելվածը:

⁶ Տե՛ս հավելվածի թիվ 10 նկարագրությունը:

⁷ Սալլանթեանց ազգանունը բնագրերում հանդիպում է նաև Սալլանթեան ձևով, սակայն մենք նախապատվություն տվեցինք առաջին տարբերակին:

ցիչ Գրիգոր ավագ սարկավագ Տեր Ավագյանցը (Նախիջևանեցի)¹ երկիցս (1839 և 1840 թթ.) վերաշարադրել է Մ. Սալլանթյանցի՝ 1827 թ. Մոսկվայում տպագրված «Քերականություն գրաբառ լեզուիս հայոց» աշխատության առաջին հատորը («Փոքր քերականություն» վերնագրով)²: 1839 թ. ձեռնարկն³ արդեն իսկ էապես տարբերվում էր Մ. Սալլանթյանցի քերականության դասագրքից, իսկ 1840 թ. այն վերահրատարակում է որոշակի սրբագրումներով և հավելվածներով⁴: Այսպիսով, նոր դասագրքի այս հրատարակությունները ներկայացնում են նախկինի՝ ավելի պարզեցված, մասնակի կրճատումներով, ավելացումներով և խմբագրումներով տարբերակներ: Ինչպես ճշտում է դասագրքի անվանաթերթը, այդ փոփոխություններն արվել են դպրոցահասակ երեխաների համար հայերենի քերականությունը դյուրնկալելի դարձնելու նպատակով⁵: Այս առումով նշենք, օրինակ, Գ. Տեր Ավագյանցի երկու դասագրքերում ներդիրի տեսքով տեղադրված մեծադիր թերթերը, որտեղ կողք կողքի բերված են հայերեն քերականության աղյուսակներ: Այսպիսի ներդիրների տպագրությունը դյուրին գործ չէր տվյալ ժամանակի տպարանների համար: Գ. Տեր Ավագյանցը գրեթե նույն ճանապարհով հրատարակության է պատրաստել Մ. Սալլանթյանցի մեկ այլ՝ կրոնագիտության դասագիրքը⁶, որը լույս է տեսել 1840 թվականին⁷:

¹ Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցում Գ. Տեր Ավագյանը, բացի հայոց լեզվից, հետագայում դասավանդել է նաև կրոնագիտություն (տե՛ս ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 117, վավ. 382, թթ. 5բ, 6բ):

² **Սալլանթեանց Կոստանդնուպոլսեցի Միքայել ծ. վրդ.**, *Քերականություն գրաբառ լեզուիս Հայոց, Բաժանեալ յերկու հատորս. ի փոքր և ի մեծ*, Հտ. Ա., Փոքր քերականութիւն, ի Մոսկով, 1827:

³ Տե՛ս հավելվածի թիվ 7 նկարագրությունը:

⁴ Տե՛ս հավելվածի թիվ 12 նկարագրությունը:

⁵ «Փոխեալ 'ի Հարցս և 'ի Պատասխանիս 'ի պէտս աշակերտաց ստորին դաստան և նոր սկսանողաց 'ի վարժապետէ Հայոց լեզուի յԱագ սարկաւագէ Գրիգորէ Տ[է]ր Աւագեանց. հանդերձ աղիւսակօք Քերականական հարցմանց՝ եղելովք 'ի վախճանի իւրաքանչիւր տեսակի բառից 'ի շնորհս համբակաց...»:

⁶ **Սալլանթեանց Կոստանդնուպոլսեցի Միքայել ծ. վրդ.**, *Կրօնագիտութիւն քրիստոնէական, ըստ ուղղափառ դասանութեան առաքելական եկեղեցոյ լուսատոջակրօն հայոց*, ի Մոսկով, 1831:

⁷ Տե՛ս հավելվածի թիվ 9 նկարագրությունը:

1839 թ. Շուշիում տպագրվել է «*Համառոտ հայկազեան քերականութիւնը*»¹ աշխատասիրությամբ Խաչատուր քահանա Տեր Հոհանյանցի (Շամշադինեցի): Գրքի բնագրից առաջ զետեղված է Խաչատուր քահանայի նամակը՝ ուղղված Բաղդասար մետրոպոլիտին, որից տեղեկանում ենք, որ վերջինիս հանձնարարությամբ նա ձեռնամուխ է եղել Մ. Սալլանյանցի քերականության համառոտման ու խմբագրման գործին՝ դարձյալ դյուրընկալելի դարձնելու նպատակով: Օրինակ՝ նա պարզեցրել է խորին ծանոթությունները, տարբեր գրքերից լրացրել է քերականական կանոնները, օգտվել է ինչպես Մ. Չամչանցի, այնպես էլ նախկին շրջանի այլ հեղինակների աշխատություններից:

Հետաքրքրական է, որ Բաղդասար մետրոպոլիտի տպարանում չի տպագրվել Մ. Չամչանցի «*Քերականութիւնը*»²: Պատճառը, թերևս, այն է, որ այս աշխատությունը 1826 թ. արդեն երկիցս վերահրատարակվել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տպարանում, իսկ 1833 թվին՝ Շուշիում: Վերջին տպագրության օրինակներից որոշները մեծ հավանականությամբ պետք է եղած լինեին Ղարաբաղի հոգևոր դպրոցում: Սակայն այդ ժամանակաշրջանի համար Մ. Չամչանցի աշխատությունը բավական դժվարամարս էր. պատմաբան, հնագետ Ալեքսանդր Երիցեանցն այն բնութագրում է որպես իր ժամանակի «չոր ու ցամաք» քերականություն³:

Ահա այս խնդիրներով էին պայմանավորված Բաղդասար մետրոպոլիտի ձեռնարկած վերահրատարակությունները: Նույնիսկ տասնամյակներ անց Շուշիում մեծ պահանջարկ ունեին այս դասագրքերը, որոնք ոչ միայն դժվարությամբ էին ձեռք բերվում, այլև շատ բարձր գին ունեին⁴, ինչն, իհարկե, կրթական գործին խանգարող հանգամանք էր:

¹ Տե՛ս հավելվածի թիվ 6 նկարագրությունը:

² **Չամչեանց Միքայել վրդ.**, *Քերականութիւն հայկազեան լեզուի, եւ այժմ նորոգ համառոտեալ աշխատասիրութեամբ նորին առ ի դիպրութիւն ուսանողաց*, ի Վենետիկ, 1801:

³ Տե՛ս **Երիցեանց Ա.**, *Պարմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգեւոր դպրոցի որ ի Թիֆլիզ (1824-1899 թ.)*, Հտ. Ա. (1824-1850 թ.), վեց պատկերով, Թիֆլիզ, 1898, էջ 122-123:

⁴ **Ա. Մ. Դ.**, «Նամակ Շուշուց», *Մշակ*, Թիֆլիս, 22 փետրվարի, 1873, N 7, էջ 2:

Ֆրանսիացի աստվածաբան և փիլիսոփա Անտոն Կովդինի (Antoine Goudin, 1639-1695) «Փիլիսոփայություն» աշխատության¹ գրաբար թարգմանության առաջին հատորը (առաջին մաս), որը վերնագրված է «Տրամաբանություն», որոշակի փոփոխություններով ու համառոտությամբ հրատարակվեց 1840 թ. Շուշիում Հովսեփ վարդապետ Արցախեցու աշխատասիրությամբ²: Հայ տպագրության մեջ այս աշխատությունն առաջին անգամ ամբողջապես (4 հատորով) հրատարակվել է 1750-1751 թթ. Վենետիկում Մխիթարյան միաբան Վրթանես վարդապետ Ասկերյանի թարգմանությամբ (լատիներենից գրաբար)³: Հայկական իրականության մեջ քիչ չեն նաև այս աշխատության հայերեն ձեռագիր թարգմանությունները⁴: Թամարա Մինասյանը հիշատակում է Հ. Արցախեցու աշխատասիրած և Արցախի Աբ. Հակոբ վանքում գրված՝ «Գիրք տեսական փիլիսոփայության» վերնագրով հինգ ձեռագրեր⁵: Բացի դրանցից, պահպանվել է նաև 1831 թ. Շուշիում գրված համանման մեկ այլ ձեռագիր⁶, որն ընդօրինակել է Հ. Արցախեցու աշակերտ Գ. Տեր Ավագյանը:

¹ P. Fr. Antonio Goudin, *Philosophia juxta inconcussa tutissimaque divi Thomæ dogmata*, Lyons, 1671.

² Հովսեփ վրդ. Արցախեցին 18-19-րդ դդ. բանասեր էր, փիլիսոփա-հոգևորական: Արցախում դասավանդել է հայոց լեզու, աստվածաբանություն, փիլիսոփայություն և տրամաբանություն: Ղարաբաղի թեմական դպրոցը մինչև 1860-ականները ներկայացնում էր վարդապետ Արցախեցու դպրոցի շարունակությունը, որը մի ժամանակ գոյություն է ունեցել Գանձասարի, ապա Աբ. Հակոբի վանքերում: Ղարաբաղի թեմական դպրոցի հիմքում Արցախեցու սաներն էին, որոնք դասավանդում էին զանազան առարկաներ: Հետաքրքրական է, որ նա հիշատակվում էր որպես «աղբիւր լուսաւորութեան Արցախական նահանգի՝ ի վերջին ժամանակս», «այր մի սրբազնակրօն և ճգնազգեաց» և այլն (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Հտ. 6, Երևան, 1980, էջ 579; **Մինասյան Թ.**, *Արցախի գրչության կենտրոնները*, Երևան, 2015, էջ 23; **Լեօ**, *Պատմություն Ղարաբաղի...*, էջ 198-199; **Ջալալեանց Սարգիս արքեպս.**, *Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան*, մասն Բ., Տիֆլիս, 1858, էջ 355; **Ղուկասեանց Հ.**, *Բողոքականություն Կովկասու հայոց մէջ (պատմական նկար)*, Թիֆլիս, 1886, էջ 11):

³ **Փաշայան Ա.**, «Վրթանես Ասկերյանը և նրա թարգմանական ժառանգությունը», *Պատմա-բանասիրական հանդես*, 2005, N 3, էջ 98:

⁴ **Անասյան Հ.**, *Հայկական մատենագիտություն (Ե-ԺԳ դդ.)*, Հտ. Ա., Երևան, 1959, էջ 959-966:

⁵ **Մինասյան Թ.**, *Արցախի գրչության կենտրոնները*, էջ 87:

⁶ Ձեռագրի անվանաթերթին կարդում ենք՝ «Գիրք տեսական փիլիսոփայության, հաւաքեալ ի Յօսեփայ աստուածիմաստ վարդապետէ Արցախեցոյ, ի յօգուտ հե-
128

Հարց է առաջանում, թե ինչու՞ Շուշիում 1840 թ. տպագրվեց «Փիլիսոփայություն» աշխատության՝ միայն առաջին հատորի հայերեն թարգմանությունը՝ խմբագրված և համառոտված տարբերակով¹, եթե Հ. Արցախեցու աշխատասիրությամբ Արցախում եղել են նշված երկի բոլոր չորս մասերի ձեռագիր համառոտված տարբերակները: Ինչպես տեսանք, առաջին հատորն ամբողջովին նվիրված է տրամաբանությանը: Ըստ Հակոբ Անասյանի՝ 18-19-րդ դդ. հայոց ուսումնարաններում այն օգտագործվել է նաև որպես փիլիսոփայության դասագիրք. այդ նպատակով էլ շարադրվել են առաջին հատորի համառոտությունները, դրա մասին գրվել են զանազան մեկնողական աշխատություններ, որոնք տարածվել են ընդօրինակություններով²:

Բաղդասար մետրոպոլիտի հրատարակած գրքերից թերևս ամենակարևորը հայ մեծանուն հեղինակների շարքում նշանավոր տեղ զբաղեցնող Եսայի Հասան-Ջալալեանց Աղվանից կաթողիկոսի «Պարմութիւն Աղուանից» աշխատությունն է³: Բաֆֆին գրում է, որ այդ երևելի հոգևորականը Ղարաբաղի մելիքների ապստամբության (1700-1728 թթ.) առաջնորդներից մեկն էր: Նա ոչ միայն իր ժամանակի իրադարձությունների ականատեսն էր, այլև գլխավոր դերակատարը, որ օրագրության տեսքով գրի էր առել այդ բոլոր դեպքերի ընդարձակ նկարագրությունը: Գրողն ավելացնում է, որ Բաղդասար մետրոպոլիտը տպագրել էր այդ աշխատությունը 1839 թ. Շուշիում՝ «սաստիկ համառոտած և անխնա կերպով կրճատած»⁴: Իր իսկ խոսքերով՝ նա ավելորդ է

տետղաց արտաքին գրոց գիտութեան, դիւրալուր ոճիւ...» (տե՛ս *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մարենադարանի*, Հտ. Թ., Ձեռագիրք 2701-3000, Երևան, 2017, էջ 838-839 (ՄՄ. ձեռ. 2835)):

¹ Բնագրի վերջում (էջ 244-246) զետեղված է գրքի տպագրությանն օժանդակած քանասեր և բարերար անձանց անվանացանկը, որոնք տվյալ ժամանակաշրջանում Արցախի կրթական և եկեղեցական ասպարեզների նշանավոր դեմքերից էին: Իսկ նրանց անունների դիմաց նշված են հատորների թվեր, որոնք ամենայն հավանականությամբ ցույց են տալիս Տրամաբանութիւն գրքի՝ իրենց հասանելիք օրինակների քանակը:

² **Անասյան Հ.**, *Հայկական մարենագիտություն...*, էջ 959:

³ Այն երկրորդ անգամ հրատարակվել է Երուսաղեմում շուրջ երեք տասնամյակ անց (տե՛ս **Հասան Ջալալեանց Եսայի կաթողիկոս, Պարմութիւն համառօտ Աղուանից երկրի**, Երուսաղեմ, 1868):

⁴ **Բաֆֆի**, *Երկերի ժողովածու 12 հատորով*, Հտ. 9 (Ուղեգրություններ, պատմական երկեր), Երևան, 1987, էջ 435-436:

համարում բացատրել, թե ինչու՞ է Բաղդասար մետրոպոլիտը կատարել այդ «գրականական սպանությունը» և միաժամանակ հայտնում, որ սույն պատմության բնագիրը եղել է բավական ընդարձակ, ինչը վկայում է իր ձեռքը հասած կիսով չափ քայքայված գրչագիր մի օրինակ: Բաֆֆու ցանկությունն է եղել գտնել Եսայի կաթողիկոսի գրած «*Պատմութիւն Աղուանիցի*» ամբողջական տարբերակը, որն առատ նյութ կտրամադրեր «Արևելից կողմանց հայոց» պատմությանը¹:

1837-1840 թթ. Բաղդասար մետրոպոլիտի հրատարակած գրքերը կրում էին անցյալի հայ տպագրական ավանդույթների ազդեցությունը: Դրանով էին պայմանավորված գրքերի մեծ մասում առկա հիշատակարանները, որոնք, սակայն, աղբյուրագիտական նշանակություն չունեն: Փոխարենը՝ մի քանի գրքերում առկա «առաջաբանները» կարևոր տեղեկություններ են հաղորդում դրանց ստեղծման պատմության մասին: Հետաքրքրական է, որ հիշյալ շրջանում Բաղդասար մետրոպոլիտի հրատարակած գրքերից միայն «*Մաշտոց*» ծիսարանն ունի առաջաբան՝ իր հեղինակությամբ: Այդ գրքում մետրոպոլիտը նշում է, թե նախկինում գոյություն են ունեցել տարբեր տեսակի «*Մաշտոց*» ծիսարաններ, որոնք ունեցել են ինչ-ինչ թերություններ և բացթողումներ: Դա դժվարացնում էր ինչպես ծիսակատար քահանաների, այնպես էլ հավատացյալ ժողովրդի հետ ծիսական հաղորդակցությունը: Ուստի, մետրոպոլիտը որոշում է նոր՝ բարեփոխված «*Մաշտոց*» տպագրել, որտեղ լրացնում է շատ մոռացված կարգեր՝ դրանք քաղելով տարբեր ձեռագրերից, ինչպես նաև ավելացնելով սեփական տարբերակները: Սա վկայում է այն մասին, որ Բաղդասար մետրոպոլիտն իր թեմի տարածքում զբաղված չէր միայն վարչական գործերով, այլ նաև ծավալում էր գիտահրատարակչական գործունեություն՝ նոր որակ հաղորդելով Հայ եկեղեցու առաքելությանը:

Շուշիում բողոքական քարոզիչների՝ նախկինում հրատարակած գրքերն աչքի չէին ընկնում տպագրական շքեղ արտաքինով, այլ առավելաբար ունեին համեստ ձևավորում: Գեղարվեստական հարդարանքի տեսակետից դրանք նույնպես շատ պարզ էին, չունեին ճոխ անվանաթերթեր, զարդագրեր, գլխատառեր, անգամ՝ հիշատակարաններ: Պարզ գլխազարդերով և վերջազարդերով ևս հարուստ չէին: Այդ ամե-

¹ Բաֆֆի, *Երկերի ժողովածու...*, էջ 615-616:

նով հանդերձ դրանք բավական մաքուր տպագրություններ էին: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ քարոզիչների համար էականը գրքերի բովանդակության մատչելիությունն էր, որի շնորհիվ դրանք հասկանալի կդառնային հասարակության լայն շրջաններին: Ահա թե ինչու հետզհետե քարոզիչները խուսափեցին խրթին լեզվով շարադրված և դժվարընկալելի հրատարակություններից՝ գրաբարից անցում կատարելով աշխարհաբար արևելահայերենի: Մինչև անգամ տպագրական պատվագրության (հապավված բառեր) ավանդույթը, որը հայ տպագրության մեջ ընդունված էր կիրառել այդ և նախորդող ժամանակաշրջաններում, ինչպես նաև գրքերի անվանաթերթերին տպագրության թվականին զուգահեռ հանդիպող հայոց Մեծ թվականի կիրառումը բողոքական քարոզիչների հետագա տպագրություններում աստիճանաբար իրենց տեղը զիջեցին ավելի պարզ շարադրանքներին:

Մինչդեռ, Բաղդասար մետրոպոլիտի տպարանում հրատարակված գրքերը կրում էին անցյալի տպագրական ավանդույթները, որոնցից տարիներ առաջ հրաժարվել էին բողոքական քարոզիչները: Ոչ միայն գրքերի անվանաթերթերին, այլև բնագրերում և հիշատակարաններում մի քանի անգամ նշվում էր Բաղդասար մետրոպոլիտի ջանքերով և ծախսերով («արդեամբք եւ ծախիւք») տպագրված լինելու հանգամանքը: Նույնիսկ տպարանի անվանումը տարբեր կերպ է հիշատակվում այս գրքերի անվանաթերթերին¹:

Այնուհանդերձ, Բաղդասար մետրոպոլիտի տպարանում հրատարակված ծիսական կիրառության գրքերն ունեին գեղարվեստական ուրույն հարդարանք: Տվյալ ժամանակաշրջանի նմանաբնույթ հայերեն գրքերում հանդիպում էին փորագրապատկերներ, որոնք ներկայացնում էին Քրիստոսի կյանքի տերունական դրվագները, աստվածաշնչյան թեմաները և այլն: Մինչդեռ Բաղդասար մետրոպոլիտի տպարանը, չունենալով փորագրապատկերներ տպագրելու հնարավորություն, դրանց

¹ «Ի տպարանի Բարձր Սրբազան Մետրապոլիտին վիճակին Ղարաբաղու Արքեպիսկոպոսին և Ասպետին Բաղդասարայ», «Ի տպարանի Բարձր Սրբազան Մետրապոլիտին Վիճակին Ղարաբաղու Տեառն Բաղդասարայ», «Ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեան», «Ի տպարանի Բարձր Սրբազան Ասպետափառ Մետրապոլիտին Բաղդասարայ», «Ի տպարանի վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու Բարձր Արքազան Մետրապոլիտին Բաղդասարայ», «Ի տպարանի Արքեպիսկոպոսին Բաղդասարայ»:

փոխարեն օգտագործում էր ծիսական գրքերի մեջ հանդիպող տարբեր զարդանախշերից ստացված նոր համադրվածքներ: Վերջիններս կիրառվում էին ինչպես անվանաթերթերը, այնպես էլ բնագրերը զարդարելու համար՝ գրքերին հաղորդելով նոր տեսք և ճաշակ:

Մետրոպոլիտը չբավարարվեց այսքանով: 1838 թ. նրա տպագրած ծիսական գրքերում տեսնում ենք մեծադիր գլխագրեր, որոնք բացակայել են Շուշիում բողոքական քարոզիչների հրատարակություններից: Այս ավանդույթը վերականգնելու նպատակով Բաղդասար մետրոպոլիտն իր տպարանում կիրառում է գլխագրեր, որոնք առկա էին այլուր տպագրված նմանաբնույթ գրքերում:

Ծիսական այդպիսի գրքերից էր, մասնավորապես, 1838 թ. Շուշիում հրատարակված «*Ժամագիրքը*»¹, որը համեմատել ենք 1837 թ. Մայր Աթոռում տպագրված ժամագրքի հետ: Շուշիի օրինակում, ի տարբերություն Էջմիածնի օրինակի, չկան պատկերներ, ճոխ զարդանախշեր ու զարդագրեր. փորագրապատկերներին փոխարինում են պարզ զարդանախշերից ստացված խաչերն ու այլ համադրությունները, ճոխ զարդանախշերին՝ պարզ զարդանախշերը, զարդագրերին՝ գլխագրերը:

Այդ տարիներին Շուշիում հրատարակված գրքերը կազմարարական արվեստի տեսակետից ևս հասարակ էին՝ չնայած մեզ հանդիպել է նաև գեղեցիկ դրոշմազարդով և ոսկեզօծ եզրագծերով յուրահատուկ կազմ ունեցող մի տպագրություն: Խոսքը Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող (դասիչ՝ ՄՄ. 8774)՝ 1839 թվականի «*Համառոտություն փոքր քերականության գրաբառ լեզուի հայոց*» աշխատության օրինակի մասին է, որը նույն թվականին հրատարակված համանուն գրքի մեկ այլ տպագրությունն է: Վերջինս ոչ միայն տարբերվում է իր կազմով, այլև դրա բնագրում (Էջ 52) տեղ գտած խաչանիշ զարդանախշով, որը չի հանդիպում նույնանուն գրքի՝ հասարակ կազմով տպագրված օրինակում²: Փաստորեն, շքեղ կազմարարությունը և բնագրային զարդանախշի հավելյալ առկայությունը հուշում են, որ տպարանը նույն գրքից պատրաստել է երկու տպագրություն. մեկը՝ առանձնահատուկ կազմով (երևելի անձանց նվիրելու համար), իսկ մյուսը՝ հասարակ կազ-

¹ Տե՛ս հավելվածի թիվ 3-ի նկարագրությունը:

² Այսպիսի մի օրինակ պահվում է Հայաստանի ազգային գրադարանում:

մով (լայն շրջանակների համար): Անցյալի հայ տպագրության պատմության մեջ քիչ չեն նաև այսպիսի դեպքերը:

Այդ տարիներին Շուշիում տպագրված գրքերը չեն ունեցել սոսկ տեղական նշանակություն. դրանք տարածվել են նաև Շուշիից դուրս: Նման մի օրինակի հանդիպում ենք 1840 թ. հրատարակված և Երևանի Մատենադարանում պահվող (դասիչ՝ ՄՄ. 9296) «Մաշտոց» ծիսարանի դեպքում, որի ձեռագիր հիշատակարանից տեղեկանում ենք, որ այն գնվել է 1843 թ. Նախիջևան քաղաքում: Հետաքրքրական է Ռաֆայել Իշխանյանի հայտնած մի տեղեկություն, համաձայն որի՝ Բաղդասար մետրոպոլիտը համագործակցել է նաև Կ. Պոլսի հայտնի հայ գրավաճառ Մարգարի հետ¹, ինչը կարող էր հնարավորություն ընձեռել՝ Շուշիում տպագրված գրքերը վաճառելու նպատակով հասցնել մինչև Կ. Պոլիս: Ի դեպ, Բաղդասար մետրոպոլիտը Էջմիածնի Սինոդին ուղղած մի գրության մեջ հայտնում է, որ ինքը նպատակ է ունեցել Շուշիում տպագրված ծիսական գրքերը վաճառել, որպեսզի դրանցից ստացվող՝ թեկուզ փոքր եկամուտն օգտագործի թեմի ամենօրյա կարիքների համար²:

1840 թ. տպագրված և Հայաստանի ազգային գրադարանում պահվող (դասիչ՝ ԱՀ 244) «Տրամաբանություն» գրքի ձեռագիր հիշատակարանից տեղեկանում ենք, որ մետրոպոլիտը տվյալ գիրքը նվիրել է Ղարաբաղի հոգևոր դպրոցի աշակերտ Ավագ Նազարյանցին³: Ուշագրավ է, որ ձեռագիրը գրված է երկգույն թանաքով. ձեռագրում երեք բառ (դասատան աստիճանը և աշակերտի անուն-ազգանունը) գրված են ավելի մուգ գույնի, իսկ մնացած բառերը՝ ավելի բաց գույնի թանաքով: Ուսումնասիրելով Բաղդասար մետրոպոլիտի ինքնագրերը՝ հասկանալի է դառնում, որ բաց թանաքով գրվածը պատկանում է հենց իր գրչին, իսկ մուգավունով արվածը՝ մեկ ուրիշի: Ստացվում է, որ մետրո-

¹ Իշխանյան Ռ., Հայ մատենագիտության պատմություն, Պրակ Բ (1800-1920), Երևան, 1968, էջ 353:

² Լեօ, Պատմություն Ղարաբաղի..., էջ 123-124:

³ «Շուշոյ գաւառական Արքունի Ոսումնարանի առաջին դասարան Աշակերտի Աւագայ Նազարեանց. 'ի նշան հայրական սիրոյ իմոյ վ[ա]ս[ն] գովանի յառաջադիմութե[ան] ն[ո]ր[ա] յումմանն ընծայեցաւ յինէն:- 'ի 1 յուլիսի 1845 ամի. 'ի քաղաքն Շուշի: - Վիճակաւոր Առաջնորդ Ղարապաղու Արքեպ[ի]ս[կոպոս] եւ Ասպետ»: Ապա դրոշմված է Բաղդասար մետրոպոլիտի կնիքը՝ «ՄԵՏՐՈՊՈԼԻՏ Բ: Հ. Զ[Ա]Լ[Ա]-ԼԵՆՏ»:

պոլիտը նախապես մակագրել է մի քանի գրքեր՝ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին նվիրելու նպատակով, իսկ տեղում այլ գույնի թանաքով լրացվել են բաց թողնված մասերը՝ նշելով տվյալ դասարանի աստիճանը և աշակերտի անուն-ազգանունը: Ենթադրելի է, որ այս ձեռագիր հիշատակարանը եզակի դեպք չէ, քանի որ եթե մետրոպոլիտը գիրք նվիրած լիներ միայն մեկ աշակերտի, ապա նա ինքը կգրեր այդ աշակերտի տվյալները և ոչ թե բաց կթողներ, որպեսզի դրանք լրացվեին հետագայում: Իսկ մետրոպոլիտի նվիրած գիրքը, որը հասկանալիորեն հիշյալ ժամանակաշրջանում թանկագին նվեր էր, խոսում է նաև աշակերտներին խրախուսելու մասին: Բացի դրանից, Շուշիում այդ տարիներին հրատարակված գրքերից կային Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որոնց հիմքում ընկած են Մ. Սալանթյանցի աշխատությունները: Այդ մասին տեղեկանում ենք Լազարյան ճեմարանի ընդհանուր տպագիր գրացուցակի¹ հայերեն գրքերի բաժնից²:

Որպես ամփոփում նշենք, որ Բաղդասար մետրոպոլիտի տպարանում հրատարակված գրքերն այդ և հետագա տարիներին մեծ կարևորություն են ունեցել տեղի կրթական և հոգևոր-մշակութային կյանքում, որոնց իրագործման հիմքում կանգնած էր Հայ առաքելական եկեղեցու՝ երևելի այս հոգևորականը: Այստեղ հետաքրքրական է, որ մետրոպոլիտը գրքերի տպագրության համար ոչ միայն օգտագործում էր իր անձնական միջոցներն ու ներդնում հսկայական ջանքեր, այլև ներգրավում էր ժամանակի գիտակ և կարող անձանց՝ Շուշիում հրատարակելու հանրամատչելի և բովանդակալից դասագրքեր: Այս հետազոտության նպատակն է հանրայնացնել այդ տարիներին Շուշիում տպագրված գրքերի մասին տեղեկությունները՝ ցույց տալով դրանց դերն ու նշանակությունը հայ տպագրության պատմության մեջ:

¹ *Catalogue des livres de la bibliothèque fondamentale de l'Institut Lazareff des langues orientales*, Moscou, 1861.

² *Ցուցակ տպեալ հայ մարտնից գրադարանի Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց*, էջ 18-19, 33:

**ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՑԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ
1837-1840 ԹԹ. ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ¹**

(հավելված)

1. Ջորջ Բայրոն, Շիլիոնեան կալանաւոր/ Թարգմանութիւնը՝ Մովսէս Զօհրապեանի.- Շուշի, 1837:
ՄԼԹ. Բնագիրը՝ գրաբար, չափածո: Էջերի քանակը՝ անհայտ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^փ 903): Վավերագրում՝ «Հրամանաւ վիճակաւոր Առաջնորդին Ղարապաղու»:
2. Սաղմոս.- Շուշի, 1838:
*ՄԼԹ. Բնագիրը՝ գրաբար: Էջերի քանակը՝ անհայտ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված է ՀԴՄ-ում: Վավերագրում՝ «Վճռահայտութեամբ և հրամանաւ Սինհոդոսին Էջմիածնի»:
Սույն սաղմոսագիրքը ներկայացնում է մեկ կանոն՝ 29 սաղմոսով²:*
3. Ժամագիրք.- Շուշի, 1838.- [573] էջ³:

¹ Սույն ցանկը պատրաստելիս՝ մատենագիտական նկարագրություններում հարազատ ենք մնացել անվանաթերթերի բնագրային տեղեկություններին: Նկարագրվող գրքի կամ գրքուկի պահպանման վայրը նշելիս՝ նախընտրություն ենք տվել Հայաստանի ազգային գրադարանին (այսուհետ՝ ՀԱԳ), իսկ բացակայության դեպքում՝ նշել ենք պահպանման մեկ այլ վայրը, եթե հայտնի է: Ուսումնասիրության արդյունքում բացահայտված գրքերի մասին տեղեկությունները նույնպես ծանոթագրված են, թեև դրանք «առ աչօք» (de visu) չենք տեսել, և ոչ էլ մեզ հայտնի է պահպանման վայրը: Գրքերի ուսումնասիրության ընթացքում եղել են դեպքեր, երբ միաժամանակ համեմատել ենք տարբեր վայրերում պահվող միևնույն գրքի մի քանի բնօրինակներ, սակայն սույն ցանկում չենք նշել դրանց բոլորի պահպանման վայրերը, ինչպես ընդունված է մատենագիտական ցանկերում: Այս տպագրությունների օրինակներ են պահպանվում ՀԱԳ-ում, ՄՄ-ում, Գրականության և արվեստի թանգարանում (այսուհետ՝ ԳԱԹ), ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանում, Երևանի պետական համալսարանի՝ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Բացի դրանից՝ մեր ցանկում նշված են, թե ո՞ր գրքերն են հիշատակված Հայկ Դավթյանի կազմած մատենագիտության (այսուհետ՝ ՀԴՄ) մեջ, իսկ որոնք՝ ոչ: Գրքերի տպագրության արտոնության մասին տեղեկանում ենք Ղարաբաղի կոնսիստորիայի կազմած և Բաղդասար մետրոպոլիտի ստորագրած մի ցուցակից, որը հիշատակված է մեր հոդվածում: Սույն ցանկի յուրաքանչյուր գրքի համար ծանոթագրության մեջ բերված են տվյալ տպագրությունն արտոնողի տվյալները՝ համաձայն 1844 թ. Ղարաբաղի կոնսիստորիայի կազմած «Ցուցակ մատենիցն ու գրքուկաց տպագրելոց ՚ի վիճակային տպարանին Ղարապաղու» վավերագրի:

² Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 297, թ. 1:

³ Շուշիում տպագրված այս ժամագրքի էջակալությունը մի քանի անգամ խախտված է, ինչն առաջին հայացքից կարող է շփոթության տեղիք տալ, թե գրքից բացակայում են որոշ էջեր: Այսպես, 194-րդ էջին սխալմամբ հաջորդում է 197-ը, 212-րդ

ՆԱԹ. Բնագիրը՝ գրաբար: Բնագրից հեղու զեղեղված են Ամենայն հայոց և Աղվանից կաթողիկոսների գավազանագրքերը՝ «Կարգք և թիփ անուանց Կաթողիկոսացն Հայոց» և «Անուանք և թիփ կաթողիկոսացն Աղուանից...» խորագրերով: Աղվանից կաթողիկոսների գավազանագիրքը չի հանդիպում Շուշիում տպագրված որևէ այլ ծիսական գրքում, ուստի այս օրինակն ունի նաև աղբյուրագիտական նշանակություն: Հիշատակարան ունի: Առկա է ՄՄ-ում (թերի օրինակ, բացակայում է անվանաթերթը): Հիշատակված չէ ՀԴՄ-ում: Վավերագրում՝ «Վճռահատութեամբ և հրամանաւ Սինհոդոսին էջմիածնի»:

4. Խորհրդատետր սրբազան Պատարագի: Ըստ արարողութեան եկեղեցեացս Հայաստանեայց.- Շուշի, 1838.- 25, 1 չի. էջ:

ՆԱԹ. Բնագիրը՝ գրաբար: Հիշատակարան ունի: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^ր 956): Անվանաթերթի վրա՝ «Հրամանաւ Տեառն Աստուածարեալ Առաքելաշաւիղ վիճակաւոր Առաջնորդի և Մեդրապօլտի հայոց Ղարաբաղայ և այլոց, Տեառն Պաղտասարայ Իշխանազնի Հասան Զալալեան՝ Սրբազան Արք Եպիսկոպոսի և Ասպետի»: Վավերագրում՝ «Վճռահատութեամբ և հրամանաւ Սինհոդոսին էջմիածնի»:

5. Գիրք աղօթից սրբոյ Հօրն մերոյ Եփրեմի Խուրին Ասորոյ.- Շուշի, 1838.- 105, 1 չի. էջ:

ՆԱԹ. Բնագիրը՝ գրաբար: Հիշատակարան ունի: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^ր 955): Անվանաթերթի վրա՝ «Հրամանաւ արդեամբք և ծախիք Աստուածարեալ Առաքելաշաւիղ վիճակաւոր Առաջնորդի և Մեդրապօլտի հայոց Ղարաբաղայ և այլոց, Տեառն Պաղտասարայ Իշխանազնի Հասան Զալալեան Սրբազան Արք Եպիսկոպոսի և Ասպետի»: Վավերագրում՝ «Վճռահատութեամբ և հրամանաւ Սինհոդոսին էջմիածնի»:

Էջի փոխարեն սխալմամբ տպագրված է 216, 293-րդ էջից սկսած սխալմամբ գրված է 317 և այդպես շարունակ, 348-րդ էջի փոխարեն՝ 346, 498-րդ էջի փոխարեն է՝ 468: Թեև գրքի վերջին համարակալված էջի վրա նշված է 598 թիվը, որին հաջորդում է մեկ չհամարակալված էջ, սակայն էջերի ընդհանուր քանակը հերթական թվահամարներով կազմում է 573 էջ:

¹ Սա, փաստորեն, Շուշիի այս շրջանի տպագրության՝ մեզ հայտնի այն հրատարակություններից է, որի օրինակներում պահպանվել են անվանաթերթեր, որոնց վրա, բացի գրքի մասին հիմնական տեղեկություններից (անվանում, տպարան, տպագրության վայր և տարեթիվ), առկա են օրվա կաթողիկոսի և տպագրությունն արտոնող թեմակալ առաջնորդի մասին հիշատակությունները:

6. Համառոտ հայկազեան քերականութիւն^{1/} 'ի լոյս ընծայեալ աշխատասիրութեամբ Խաչատուր քահանայի Տէր Յօհաննէանց Շամշատինեցոյ.- Շուշի, 1839.- 10 չի., 226 էջ:
ԾԱԹ. *Բնագիրը՝ գրաբար: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^մ 1012): Բնագրի վերջում՝ 225-226-րդ էջերում, կա վրիպակների ցանկ: Բնագրից առաջ՝ «Հրամայեցաք տպագրել Վիճակաւոր Առաջնորդ հայոցն Ղարաբաղու և այլոց՝ Արք Եպիսկոպոս և Ասպետ Մեդրապօլիտ Բաղդասար Հասան Զալալեանց»²:*
7. Համառոտութիւն փոքր քերականութեան գրաբառ լեզուի հայոց^{3/} Փոխեալ 'ի հարցս և 'ի պատասխանիս... յԱռաջ սարկաւագէ Գրիգորէ Տ[է]ր Աւագեանց...- Շուշի, 1839, 6 չի., 86 էջ:
ԾԱԹ. *Բնագիրը՝ գրաբար: Տիպոդոսատի վրա՝ «Առաջին մասն Համառոտութեան քերականութեան գրաբառ լեզուի հայոց»: Առկա է ՄՄ-ում (շքեղ կազմով) և ՀԱԳ-ում (հասարակ կազմով): Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^մ 1011): Անվանաթերթի դարձերեսին՝ «Տպագրեցաւ հրամանաւ արդեամբք և ծախիւք Բարձր սրբազան Վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու և այլոց Տեառն Բաղդասարայ Իշխանազնի Հասան Զալալեանց Աստուածարեալ Արք Եպիսկոպոսի և Ասպետափառ Մեդրապօլտի»⁴:*
8. Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից: Համառոտագրել[ալ] 'ի Սրբազնակատար կաթողիկոսէն Աղուանից 'ի Տէր Եսայեայ Հասան Զալալեայնց.- Շուշի, 1839, 11 չի., 69 էջ:

¹ Հայկ Դավթյանի մատենագիտության հատորում այս գրքի նկարագրությունից, ինչպես նաև մեր ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ միակ հայտնի օրինակը պահվում է ՄՄ-ում: Հարկ է նշել, որ ՀԱԳ-ում աշխատելու տարիներին՝ որպես Գրքային և ոչ գրքային հրատարակությունների համալրման գնահատող հանձնաժողովի անդամ, 2019 թ. գտել եմ այս գրքից ևս մեկ օրինակ, որը ՀԱԳ-ը ձեռք է բերել իմ խորհրդով: Հետաքրքրական է, որ գրավաճառ ցանցերում հազվադեպ են պատահում այս տարիներին Շուշիում տպագրված գրքեր:

² Վավերագրի ցուցակի 6-րդ համարում տեղ գտած գրքի վերնագրի մասին գրված է «Քերականութիւն[ի]ն համառոտ», իսկ տպագրության տարեթիվը նշված է 1839, տպագրության արտոնությունը՝ «Վճռահատութեամբ և հրամանաւ Սինհոդոսին Էջմիածնի»: Մեզ այդպես էլ պարզ չեղավ, թե վերոհիշյալ գիրքը 1839 թ. Տպագրված հայերենի քերականության ո՞ր դասագիրքն է:

³ Այս գիրքն ունեցել է երկու տպագրություն, որոնցից մեկը՝ շքեղ կազմով և բնագրային մի տարբերությամբ, իսկ մյուսը՝ հասարակ կազմով: Ավելի մանրամասն տե՛ս հոդվածում:

⁴ Տե՛ս նախորդ տարընթերցումը:

ՆՆԹ. Բնագիրը՝ գրաբար: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^մ 1010): Անվանաթերթի դարձերեսին՝ «Հրամայեցաք մուծանել ՚ի փիպ սեպհական ծախսիք մերովք Վիճակաւոր Առաջնորդ Ղարապաղու և այլոց՝ Արք Եպիսկոպոս և Ասպետ Մեդրապօյի Բաղդասար Հասան Զալալեանց»: Վավերագրում՝ «Վճռահապովթեամբ և հրամանաւ Սինհոդոսին էջմիածնի»:

9. Կրօնագիտութիւն կամ հոգեվարժութիւն Քրիստոնէական: Ըստ լուսաւորչական Ուղղափառ դաւանութեան] Առաքելական Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ Համառօտեալ... յԱռաջ Սարկաւագէ Գրիգորէ Տէր Առագեանց...- Շուշի, 1840, 6 չհ., 194 էջ:

ՆՆԹ. Բնագիրը՝ գրաբար: Գրքի վերջում գտնուելով են վկայություններ Սուրբ Գրքից: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^մ 1065): Անվանաթերթի դարձերեսին՝ «Հրամայեցաք փպագրել Վիճակաւոր Առաջնորդ Ղարապաղու Արք Եպիսկոպոս և Ասպետ Մեդրապօյի Բաղդասար Հասան Զալալեանց»: Վավերագրում՝ «Վճռահապովթեամբ և հրամանաւ Սինհոդոսին էջմիածնի»:

10. Ծիսարան որ կոչի Մաշտոց: Յորում աւանդին ս[ր]բ[ա]զ[ա]յն արարողութիւնիւնք ազգիս ըստ սահմանադրութեան] ս[ր]բ[ա]զ[ա]յն հայոց.- Շուշի, 1840, 2 չհ., 500, 2 չհ. էջ:

ՆՆԹ. Բնագիրը՝ գրաբար: Առկա է ՄՄ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^մ 1063): Անվանաթերթի դարձերեսին՝ «Հրամայեցաք փպագրել: Վիճակաւոր Առաջնորդ Ղարապաղու Արք Եպիսկոպոս և Ասպետ Մեդրապօյի Բաղդասար Հասան Զալալեանց»: Վավերագրում՝ «Հրամանաւ վիճակաւոր Առաջնորդին Ղարապաղու»:

11. Առաջին մասն փիլիսոփայութեան որ ասի՝ Տրամաբանութիւն/ Աշխատասիրութեամբ Հօր Յովսէփայ գիտնական Վարդապետի Տէր Առագեան Արցախեցւոյ..., Շուշի, 1840, 8 չհ., 246 էջ:

ՆՆԹ. Բնագիրը՝ գրաբար: Առկա է ՄՄ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^մ 1062): Անվանաթերթի դարձերեսին՝ «Հրամայեցաք փպագրել Վիճակաւոր Առաջնորդ Ղարապաղու Արք

¹ Ինչպես գրում է Լեոն, համառոտորդ մի փոքրիկ ոտանավորով հայտնում է, որ իր գրիչը դեռ անվարժ է: Այդ ոտանավորին հաջորդում է «Աստուած» վերնագրով ներբողը՝ գեղեցիկ գրաբարով թարգմանված Գավրիլ Դերժավինի ստեղծագործությունից: Այն ցույց է տալիս փիլիսոփայական մտածումների խոր արտահայտությունը՝ առհասարակ վկայելով թարգմանչի գրական բարձր ճաշակի և կրթության մասին: Լեոն նաև նշում է, որ նույնիսկ Մխիթարյան Հայրերը կարող էին պարծենալ այդպիսի գրաբարով (տե՛ս Լեօ, Պատմութիւն Ղարապաղի..., էջ 125):

Եպիսկոպոս և Ասպետ Մեդրապօլիտ Բաղդասար Հասան Զալալեանց»։ Վավերագրում՝ «Հրամանաւ և վճռահատութեամբ Սինհոդոսին Էջմիածնի»։

12. Առաջին մասն փոքր քերականութեան գրաբառ լեզուի հայոց։ Երկրորդ տպագրութիւն, ուղղագրեալ 'ի տեղիս տեղիս' հանդերձ ինչ ինչ յաւելուածովք/ Փոխեալ 'ի հարցս և 'ի պատասխանիս... յԱագսարկաազէ 'ի Գրիգորէ Տէր Աագեանց...- Շուշի, 1840, 6 չի., 112 էջ։

ԾԱԹ. Բնագիրը՝ գրաբար։ Տիպոդոսատի վրա՝ «Համառօտութիւն փոքր քերականութեան գրաբառ լեզուի հայոց»։ Առկա է ՀԱԳ-ում։ Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^մ 1064)։ Անվանաթերթի դարձերեսին՝ «Տպագրեցաւ հրամանաւ և ծախիւք Բարձր սրբազան Վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու և այլոց Տեառն Բաղդասարայ Իշխանազնի Հասան Զալալյեանց Աստուածաբեալ Արիի Եպիսկոպոսի և Ասպետափառ Մեդրապօլիտի։ Վավերագրում՝ «Հրամանաւ և վճռահատութեամբ Սինհոդոսին Էջմիածնի»։

13. Տետր այբենական.- Շուշի, 1840։

ԾԱԹ. Բնագիրը՝ գրաբար։ Էջերի քանակը՝ անհայտ։ Պահպանված օրինակ հայտնի չէ։ Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ^մ 1721)։

Վավերագրում՝ «Հրամանաւ վիճակաւոր Առաջնորդին Ղարապաղու»։

Summary

About the Book Published in the Printing House of Baghdasar Metropolitan Hasan-Jalalyants in 1837-1840

STYOPA PETOYAN

PhD Student of the Institute of History of NAS, RA

The article deals with the books published in Shushi in 1837-1840, which were the first editions of the printing house of the newly created Karabakh diocese. Enormous efforts and personal resources of the Primate of the Karabakh Diocese, Metropolitan Baghdasar Hasan-Jalalyants were invested in the printing of those publications. As a result of the research, some information was revealed about the recently discovered books published in Shushi during that period. Their contents and executable areas were analysed, their artistic design

was discussed in comparison with the books published in Shushi before. All the reliable information was collected by combination of various sources, thanks to which unknown information about the books was restored. At the end of the article there is a list of the books we have compiled, published in Shushi in 1837-1840, with brief bibliographical descriptions and notes.

Keywords. Shushi, Baghdasar metropolitan, Karabakh Diocese, printing house, edition, book, bibliography.

Резюме

О книгах, изданных в типографии Багдасара Метрополита Асан-Джалалянца в 1837-1840 гг.

СТЁПА ПЕТОЯН

Соискатель Института истории НАН РА

В статье рассматриваются книги, изданные в Шуши в 1837-1840 гг., являвшиеся первыми изданиями типографии новосозданной Карабахской епархии. Издание этих публикаций основано на огромных усилиях и личных ресурсах Предстоятеля Карабахской епархии Митрополита Багдасара Гасан-Джалалянца. В результате исследования была выявлена некоторая информация о недавно обнаруженных книгах, изданных в Шуши в тот период. Проанализировано их содержание и исполняемые области, отражено их художественное оформление, проведено сравнение с книгами, изданными ранее в Шуши. Была собрана вся достоверная информация, объединенная из различных источников, благодаря которым была восстановлена неизвестная информация о книгах. В конце статьи приводится составленный нами список книг, изданных в Шуши в 1837-1840 гг., с краткими библиографическими описаниями и примечаниями.

Ключевые слова. *Шуши, Багдасар Митрополит, Карабахская епархия, типография, издание, книга, библиография.*